ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 4 մարտի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Թունյանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Ա. Պետրոսյանի

Քննության առնելով «Երֆրեզ» ԲԲԸ-ի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Երֆրեզ» ԲԲԸ-ն (ներկայացուցիչ՝ Խաչատուր Օհանյան) դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2016 թվականի փետրվարի 16-ին) ՝ խնդրելով.

Որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231 հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերը ՀՀ Սահմանադրության (2015 թվականի

փոփոխություններով) 61 և 63 հոդվածների 1-ին մասերին, 78 հոդվածին համապատասխանության հարցը:

1. Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց.

Դիմողի համար բացասական իրավական հետևանքներ են առաջացրել թիվ ԵԱՔԴ/1104/0211 գործով վճռաբեկ դատարանի կողմից նրա նկատմամբ կիրառված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը:

Ըստ դիմողի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 03.06.2015թ. ընդունված որոշման և 22.07.2015թ. ընդունված՝ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման տրամաբանությամբ «Երֆրեզ» ԲԲԸ-ի վրա դրվել է ոչ իրավաչափ պարտավորություն, այն է՝ վճռաբեկ բողոք ներկայացնելիս պետք է կցել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և Վճռաբեկ դատարանի որոշումների պատճենները, որոնց հողում է կատարվում բողոքում:

2. Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով եւ ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից՝ «Երֆրեզ» ԲԲԸ-ի անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման մասնակիորեն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

2.1. **ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի վերաբերյալ.**

Դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ նշյալ դրույթը չի կիրառվել դիմողի նկատմամբ:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածն օրենքին է վերապահել սահմանադրական դատարան դիմելու կարգի սահմանումը: Այդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ

օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները: Դիմում կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը՝

- որը հանդիսացել է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից,
- որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է որևէ օրենքի դրույթ,
- որի նկատմամբ վիճարկվող դրույթը կիրառվել է գործը լուծող վերջնական դատական ակտով,
- որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով եւ 69-րդ հոդվածի 1-ին մասով՝ «Երֆրեզ» ԲԲԸ-ի անհատական դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի կողմից գործի քննության ընդունումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի վերաբերյալ, ենթակա է մերժման՝ այն դիմողի նկատմամբ կիրառված չլինելու պատճառաբանությամբ:

2.2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի վերաբերյալ.

Դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 03.06.2015թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ բողոք բերած անձը վճռաբեկ բողոքում վկայակոչել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներ, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներ, սակայն բողոքին կից չի ներկայացրել այդ

դատական ակտերը: Այնուհետև, վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության, քանի որ բողոք բերած անձը, առանց շտկելու նշյալ թերությունները, կրկին անգամ նույն հիմքերով վճռաբեկ բողոք է ներկայացրել:

«Երֆրեզ» ԲԲԸ-ի անհատական դիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա չեն դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի մասով գործի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ, ինչպես նաև 32-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Երֆրեզ» ԲԲԸ-ի անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի մասով մերժել:

2. «Երֆրեզ» ԲԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

4 մարտի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/1-7